ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ
(ԵՊՀ)

ՀԱՆԱՖԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ԿՐՈՆԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սույն հոդվածի հիմնական խնդիրն է պարզաբանել սուննի կրոնա-իրավական դպրոցների միջեւ եղած հիմնական տարբերությունները՝ շեշտը դնելով հանաֆիական մազհաբի վրա: Հանաֆիական մազհաբի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ մեր օրերում հանաֆիները գերակշիռ դիրք են զբաղեցնում Սիրիայի, Հնդկաստանի և Չինաստանի մուսուլմանների շրջանում, և, մասնավորապես, մեր հարևան թուրք մուսուլման հավատացյալների շրջանում:

Մուսուլմանական իրավունքի ձևավորումն ու զարգացումը շարունակական գործընթաց էր: Այն սկսվել է 7-րդ դարում և շարունակվել մինչև 10-րդ դարը: Այս շրջանում ձևավորվեց մուսուլմանական իրավունքի տեսություն, որը ժամանակի ընթացքում ընդլայնեց իր մեթոդաբանական ու գործիքային զինանոցը, ու իրավական դրույթների դուրսբերման համար սկսեցին օգտագործվել մեթոդներ, որոնք տարբեր իրավագետների կողմից ստացան որոշակի բնորոշում: Արդեն 8-րդ դարում իսլամական իրավունքի՝ *ֆիկհի*[1] գիտնականները բաժանվեցին երկու մեծ խմբի. առաջացան մեկը մյուսին հակադիր երկու ուղղություններ: Դրանցից մեկը *ահլ ալ-հադիս*՝ «հադիսի հետևորդներն» էին, երկրորդը՝ *ասհաբ ալ-ռայ*՝ «կարծիքի հետևորդներն» էին, իսկ տարաձայնության հիմնական առարկան ֆիկհի

[1] Ֆիկհը (fiqh) թարգմանաբար նշանակում է «խորը ըմբռնում», իսկ «ֆիկհ» եզրույթը հայերեն մեկնաբանել կարելի է որպես «իսլամական օրենք», «իսլամական իրավունք» կամ մուսուլմանական ուսմունք վարքագծի կանոնների վերաբերյալ՝ այսինքն առավել լայն իմաստով մուսուլմանական իրավունք: Ֆիկհ բառացիորեն նշանակում է ճշգրիտ հասկացություն մտադրությունների էությունը ճիշտ ընկալելու համար:

հարցերի լուծման համար ռացիոնալ մեթոդների և սեփական կարծիքի կիրառումն էր[2]: Ահլ ալ-ռայի և ասիաբ ալ-հադիսի հետևորդների միջև անվերջ վեճերը և տարակարծությունները հանգեցրին կրոնա-իրավական դպրոցների՝ *մազհաբների* առաջացմանը[3]: Արդյունքում առաջացան շատ կրոնա-իրավական դպրոցներ և ուղղություններ, որոնցից ժամանակի ընթացքում միայն 4-ը դարձան հիմնական և ընդունվեցին սուննիական իսլամի կողմից և շարունակում են գոյություն ունենալ մինչ օրս. դրանք են՝ հանաֆիական, մալիքիական, շաֆիիական և հանբալիական մազհաբները: Այս 4 հիմնական սուննիական իրավական դպրոցների մեթոդաբանական տարբերությունը կայանում է իրավական նորմերի դուրսբերման համար կիրառվող գործիքների ընտրության մեջ: Վերոնշյալ 4 իրավական դպրոցներից իր հանդուրժողականությամբ, իրավական մեթոդների կիրառման ճկունությամբ առանձնանում է հանաֆիական մազհաբը: Հանաֆիական մազհաբի հետևորդները ահլ ալ-ռայի հետևորդներ են, ինչը նշանակում է, որ իրավական հարցերի լուծման համար առաջնորդվում էին ռացիոնալ մեթոդով: Հանաֆիականներն առաջինն էին, ովքեր սկսեցին օգտագործել համանմանության հիման վրա նորմի դուրսբերման մեթոդը՝ *կիյասը*[4], և հիմք դրեցին *իսթիհսանի*[5]

---

[2] «Հադիսի հետևորդները» (āhl al-ḥadīṯ) և «կարծիքի հետևորդներն» (āṣḥāb al-rāy) իրավագետներ էին, ովքեր տարբեր կերպ էին վարվում իրավական հարցերը կարգավորելիս, ինչով էլ պայմանավորված էր նրանց բաժանումը:

[3] Մազհաբ (maḏhab) բառն աբերենից թարգմանաբար նշանակում է ուղի, ուսմունք կամ դոկտրինա, որին պետք է հետևի մուսուլմանը:

[4] Կիյասը (qīās) համանմանության սկզբունքով արված դատողությունն է: Մեթոդի իրական էությունը կայանում է նրանում, որ նմանատիպ խնդիրների առաջացման դեպքում հայտնության մեջ տեղ գտած համանման դեպքի համանմանությամբ լուծում է տրվել հարցին:

[5] Իսթիհսան (“istihsān”)-նախընտրություն, որը հնարավորություն է տալիս հրաժարվել կիյասի մեթոդով ստացված փաստարկից կամ դրույթից, եթե տվյալ իրավիճակում համանմանության հիման վրա ստացված արդյունքը ձևով ճիշտ է, սակայն իրականում նպատակահարմար և ընդունելի չէ և այդ դեպքում ընդունվում է կիյասի հիման վրա ստացված փաստարկին

գործածմանը: Հանաֆիները մյուսներից տարբերվում էին նաև *‘օրֆի* կիրառմամբ[6]:

Դասական մուսուլմանական իրավական ուսմունքը հիմնված է ալ-Շաֆիի “Uṣūl al-fiqh”(«Ֆիկհի հիմքերը») տեսության վրա: “Uṣūl al-fiqh”-ը՝ որպես իրավական գիտություն իսլամում առաջացել է Աբդ ալ-Ռահման իբն Մահդիի[7] մահից առաջ 813-814 թվականներին: “Uṣūl al-fiqh”-ի կոնցեպցիայի համաձայն Ղուրանը և Սուննան հանդիսանում են ֆիկհի գլխավոր աղբյուրները, քանի որ նրանք կամ անմիջականորեն պարունակում են վարքագծի հստակ կանոնները, կամ նախատեսում են ռացիոնալ միջոցներ՝ աստվածային հայտնությունից դրանք դուրս բերելու համար[8]: Հանաֆիական մազհաբի հիմնադիրը՝ Աբու Հանիֆան կամ Իմամ Ազամ ալ-Նուման իբն Սաբիթ ալ-Քուֆին է (699-767թթ.), ով ծնվել է Քուֆայում՝ մետաքսի առևտրով զբաղվող, պարսկական ծագում ունեցող ընտանիքում:

Աբու Հանիֆայի ուսմունքի, կանոնակարգումների պահպանման և տարածման գործում առավել մեծ դեր խաղացին նրա աշակերտներից երկուսը՝ Յակուբ իբն Իբրահիմ ալ-Անսարին (731-798), որը հայտնի է Աբու Յուսուֆ[9] անվամբ, և Մուհամմադ իբն ալ-Հասան ալ-Շեյբանին (754-811թթ.)[10]: Աբու Հանիֆայի մեթոդի առանձնահատ-

---

հակառակ փաստարկ: Իսթիհսանը կիրառվում է այն դեպքում, երբ կիյասը իջմայի կամ օրֆի (‘urf) հետ հակասություն է ունենում:

[6]Օրֆը (‘urf) մուսուլմանական համայնքում ավանդաբար տարածված կարծիքների կիրառումն է:

[7] Ծնվել է 135/742 թ., հադիսների գիտակ, մալիքիական մազհաբի ներկայացուցիչ, Իրաքի մալիքիական մազհաբի հիմնադիրներից մեկը:

[8]Weiss B., “Interpretation in Islamic Law, “The Theory of Ijtihād”, The American Journal of Comparative Law, Vol. 26, № 2, (Proceedings of an International Conference on Comparative Law, Salt Lake City, Utah. February 24-25, 1977), (Spring, 1978), p. 201.

[9] Հանաֆիական իրավական դպրոցի կարկառուն ներկայացուցիչներ, որոնք դասվում են դպրոցի հիմնադիր Աբու Հանիֆայից հետո և հայտնի են որպես վերջինիս երկու ուղեկիցներ (ṣāḥibayn): Sāḥib (صاحب) արաբերենից թարգմանաբար նշանակում է ընկեր, ուղեկից:

[10] Abū Ḥanīfah, “The Quintessence of Islamic Law”, p. 14, http://www.usislam.org/pdf/ImamHanifa.pdf

կությունը կայանում էր նրանում, որ նա անձամբ էր կառուցում իր դատողությունները և իրավական կարգադրություններ՝ ֆեթվաներ էր արձակում՝ հիմնվելով նախ և առաջ Ղուրանի այաթների վրա, ապա մարգարեի Սուննայի և նրա զինակիցների հադիսների վրա:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք իրավական որոշումներ և կարգադրություններ արձակելու մեթոդը, ապա պետք է նշել, որ Աբու Հանիֆայի մեթոդը հիմնվում էր հետևյալ աղբյուրների վրա՝

I. Ղուրանը - Աստծո խոսքն է, այն բացարձակ ճշմարտություն է և համարվում է իսլամական իրավական համակարգի հիմքն ու առաջնային աղբյուրը:

II. Սուննան - Օրինակներ, խոսքեր, արտահայտություններ, ճառեր Մուհամմադ մարգարեի կյանքից, որոնք ծառայում են Ղուրանի այաթների մեկնաբանության համար[11]:

III. Մարգարեի զինակիցների խոսքերը - Այս աղբյուրը ևս Շարիաթի տարբեր ասպեկտների լուսաբանման գործիք է և կարևոր մեկնաբանական դեր ունի այնքանով, որ փոխանցողները՝ մարգարեի զինակիցները, եղել են մարգարեի կողքին և գիտեին այս կամ այն խնդրի լուծմանը տրվելիք պատասխանից բացի այդ խնդրի նախապատմությունն ու էությունը:

Կիյասը - դատողություն համանմանության միջոցով: Կիրառվել է այն դեպքում, երբ մարգարեի հայտնությունների մեջ տառացիորեն դեպքը չի համընկել և խնդրի ուղիղ լուծումը չի գտնվել: Մեթոդի իրական էությունը կայանում է նրանում, որ նմանատիպ խնդիրների առաջացման դեպքում հայտնության մեջ տեղ գտած համանման դեպքի համանմանությամբ լուծում է տրվել հարցին:

---

[11] Կարևոր է նշել, որ Աբու Հանիֆայի կողմից կիրառված հադիսները հետագայում Ալ-Բուխարիի կողմից համախմբվել և դասակարգվել են որպես սահիհ – ճիշտ (ṣaḥīḥ) հադիսներ, դրանք առանձնանում են իսնադի (isnād)՝ հադիսի փոխանցողների շղթայի ճշգրտությամբ, քանի որ Աբու Հանիֆան դրանք լսել է կա՛մ անմիջապես Մուհամմադ մարգարեի հետևորդներից, կա՛մ նրանց հետևորդներից, Nadwi M. Abu, “Abu Hanifah: His Life, Legal Method and Legacy”, Oxford, Kube Publishing Ltd, 2010, p. 58.

IV. Իսթիհսան - նախընտրություն, որը հնարավորություն է տալիս հրաժարվել կիյասի մեթոդով ստացված փաստարկից կամ դրույթից, եթե տվյալ իրավիճակում համանմանության հիման վրա ստացված արդյունքը ձևով ճիշտ է, սակայն իրականում նպատակահարմար և ընդունելի չէ և այդ դեպքում ընդունվում է կիյասի հիման վրա ստացված փաստարկին հակառակ փաստարկ: Իսթիհսանը կիրառվում է այն դեպքում, երբ կիյասը իջմայի կամ օրֆի (ʻurf) հետ հակասություն է ունենում[12]:

V. Իջմա - Սա աստվածաբանների՝ մուջթահիդների կարծիքների միասնականությունը կամ նրանց միաձայն որոշումն է ինչպես անցյալում, այնպես էլ տվյալ շրջանում տեղ գտած խնդրի լուծման վերաբերյալ:

VI. ʻՈւրֆ կամ ʻօրֆ - Տարածում ունեցող որևէ տիրապետող, ավանդական կարծիքի կիրառումն է որպես փաստարկ, երբ հայտնության մեջ ուղղակի փաստեր չեն գտնվում և հնարավոր չէ համանմանության կամ իսթիհսանի կիրառումը: Այս պարագայում Աբու Հանիֆան ուսումնաիրում էր մարդկանց վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ և հիմնվում էր մուսուլմանական ավանդույթի վրա[13]: Ուրֆը բաժանվում է երկու մասի՝ սահիհ (ṣaḥīḥ) և ֆասիդ (fāsid): Սահիհ համարվում են այն ուրֆերը, որոնք չեն հակասում հայտնությանը և այն կարելի է կիրառել որպես փաստարկ, և համապասխանաբար այն ուրֆերը, որ հակասում են հայտնությանը, կոչվում են ֆասիդ և կիրառելի չեն[14]: Այսպիսով, Աբու Հանիֆան առաջինն էր, ով սկսեց դասակարգել մուսուլմանական իրավունքը: Նրա մեթոդոլոգիան նաև հակասական կարծիքներ առաջ բերեց: Այն ռացիոնալ էր, որն էլ հակասությունների պատճառ դարձավ մուսուլմանական հասարակության մեջ:

---

[12] Ислам, Энциклопедический словарь, Москва, Наука, Главная редакция восточной литературы, 1991, с. 318.

[13] Zahra M. Abu, “Imam Abu Hanifa: His life, Options and Fiqh”, Maktabah Publications, 1945, p. 66.

[14] Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XV веках, Ленинград., 1966, с. 139.

Իր գաղափարներով մալիքիական մազհաբը ավելի պահպանողական էր: Վերջինիս հիմնադիրն էր Մալիք իբն Անաս ալ-Ասհաբին: Մալիք իբն Անասը իրավական վճիռ կայացնելու համար առաջին հերթին հիմնվում էր Ղուրանի այաթների վրա, ապա Սուննայի՝ Մուհամմադի հադիսների վրա: Մալիք իբն Անասը ընդունում էր իջման և կիյասը, իսթիհսանի նկատմամբ ունեցած վերաբերմունքը միանշանակ չէր, առավելապես չէր ընդունում[15]: Մալիքիականները օգտագործում էին իսթիսլահը[16]՝ շահի դուրս բերումը: Եթե որևէ խնդրի շուրջ հայտնությունում չկա հստակ լուծում, ապա պետք է կիրառել խնդրի ցանկալի այն լուծումը, որը բխում է մուսուլմանական համայնքի շահերից:

Մալիք իբն Անասի նշանավոր աշակերտներից ալ- Շաֆիին հիմք դրեց մյուս լայն տարածում ստացած շաֆիիական մազհաբին, որը հետագայում պիտի հակադրվեր հանաֆիական մազհաբի առաջ քաշած իսթիհսանի գաղափարին: Ալ-Շաֆիին նաև համարվում է առաջին իմամը, ով դասակարգել է ֆիկհի սկզբունքները մի ամբողջական աշխատության մեջ, որը կոչվում է “Al-risālah” ***(«Ուղերձ»):*** Իմամ Ալ-Շաֆիին իր “Al-risālah” «Ուղերձ» աշխատության մեջ առանձնացնում է ֆիկհի երեք հիմնական աղբյուրները՝ Ղուրանը, Սուննան և իջման, և հետո ի հավելումն այս երեքի ավելացնում է նաև կիասը[17]: Ճանաչելով կիյասը՝ Ալ-Շաֆիին ժխտեց իսթիհսանը: Նա ասում էր, որ այս կամ այն հարցի դեպքում իսթիհսանի կիրառումը վկայում է այն մասին, որ այդ հարցի պարզաբանումը իր արտացոլումը չի գտել շարիաթում: Դրա հետ մեկտեղ ցանկացած դեպքերում անհրաժեշտ է հղում կատարել հայտնության դրույթներին, որոնք կարող են լինել ինչպես նասսերում (աստվածային հայտնություն), այնպես էլ

---

[15] Kamali M. H., Istihsan and the renewal of Islamic law, Islamic studies, 43:4, p. 569.

[16] Իսթիսլահը (istislāḥ) իրավական որոշում կայացանելն է, որը կբխի մուսուլմանական հանայնքի շահերից, Ислам: энциклопедический словарь, отв. ред. Прозоров С. М., Москва, Наука, ГРВЛ, 1991, с. 115.

[17] Masri A. M., “The Classical Conceptions of Treaty, Alliance And Neutrality In Sunni Islam”, Newcastle University Library, 1998, p. 52.

կառուցվեն համանմանության՝ կիյասի հիման վրա: Ալ-Շաֆիի կարծիքով եթե իսթիհսանը ճշմարիտ լիներ, ապա Մուհամմադը չէր սպասի հայտնությանը, այլ հարցերին կպատասխաներ այդ մեթոդի հիման վրա: Եվ, վերջապես, չկա ոչ մի տեսական կանոն, որի հիման վրա կիրառվում է իսթիհսանը: Դա տանում է մուջթահիդի[18] կողմից այնպիսի իրավական գրավոր դրույթների դուրս բերմանը, որոնք հիմնված են նրա սուբյեկտիվ նախապատվությունների վրա[19]:

Ի վերջո արաբա-մուսուլմանական աշխարհում մեծ տարածում գտած և առավել պահապանողական հայացքներով ու որոշումներով աչքի ընկնող մյուս մազհաբը հանբալիական մազհաբն է, որի հիմնադիրը Ահմադ իբն Մուհամմադ իբն Հանբալ ալ-Շեյբանիննն է:

Հանբալիական մազհաբի հետևորդները ֆիկհի առաջնային աղբյուրներ էին համարում Ղուրանն ու Սուննան այն ժամանակ, երբ կան նասսեր (Աստվածային հայտնություն), չէր թույլատրվում հղում կատարել այլ աղբյուրների: Հաջորդիվ կարևորվում էին Մուհամմադի զինակիցների իրավական կարգադրությունները՝ ֆեթվաները: Եթե զինակիցների միջև խնդիրների շուրջ տարբեր կարծիքներ կային, ապա, ըստ Ահմադ իբն Հանբալի, պետք էր հղում կատարել դրանցից այն մեկին, որն ավելի մոտ է Ղուրանի և Սուննայի ուղիղ ցուցումներին[20]: Ահմադ իբն Հանբալը թույլատրելի էր համարում նաև թույլ և մուրսալ (mursal) հադիսների կիրառումը[21]: Այն դեպքում, եթե

---

[18] Մուջթահիդները (mujtahid) մուսուլման իրավագետներն են, ովքեր որակավորված են իրավական խնդիրները լուծելու ժամանակ տրամաբանական եզրահանգումներ՝ իջթիհադներ կատարելու, Ислам: энциклопедический словарь, с. 168.

[19] Петрушевский И. П., նշվ. աշխ., էջ 139:

[20] Masri A. M., նշվ. աշխ., էջ 54:

[21] Թույլ (daif դահ՚ֆ) են համարվում այն հադիսները, որոնց մոտ բացակայում են սահիհ կամ հասան լինելու համար անհրաժեշտ մեկ կամ մի քանի պայմաններ: Հադիսը համարվում է թույլ, եթե այն փոխանցողը պակաս բարեխիղճ է իր թույլ հիշողության կամ փոխանցողների շղթայի ընդհատման պատճառով: Իսկ մուրսալ (mursal-չմիացված) էին կոչվում այն հադիսները, որոնց հաղորդողների շղթայի վերջնամասում բացակայում է Մուհամմադ

խնդիրը հնարավոր չէ լուծել առաջին չորս աղբյուրների միջոցով, Ահմադ իբն Հանբալի համաձայն այն թույլատրելի է լուծել արդեն լուծված խնդիրների համանմանությամբ՝ հենվելով հայտնության փաստարկների վրա: Ահմադ իբն Հանբալը կիրառել է նաև իսթիսլահի (istislāḥ) մեթոդը:

Չնայած մազհաբների միջև վերհանված և տեղ գտած տարբերություններին՝ նրանց համատեղ խաղաղ գոյակցությունը, նույնիսկ մեկ երկրի սահմաններում, թույլատրելի է: Այս չորս մազհաբներն էլ իրավահավասար են և պարտադրման ենթակա չեն:

VAHE HAKOBYAN
(YSU)

THE PECULIARITIES OF THE HANAFI MAZHAB IN THE CONTEXT OF SUNNI RELIGIOUS AND LEGAL SCHOOLS

This article analyzes the main differences between Sunni religious and legal schools on the background of the Hanafi school. It discusses the process of formation and development of Islamic jurisprudence which began in the 7th century and continued until the 10th century. The article also considers the main religious and legal schools which are the Hanafi, the Maliqi, the Shafii and the Hanbali Mazhabs. The aim of the article is to demonstrate the instruments for the extraction of legal provisions by Sunni religious and legal mazhabs.

մարգարեի վկայակոչվող զինակիցի անունը: Այս կատեգորիայի հադիսների նկատմամբ մուսուլման կրոնագետները ունեն հանդուրժողական վերաբերմունք, քանի որ դրանք պարունակում են կարևոր տեղեկություն իրենց գործունեության համար, Burton J., “The Introduction to the Hadith”, Edinburg University Press, 1994, p. 113.